

Ախալքალაքի պանրի ձեռնարկությունը նոր արտադրական գծով կահավորվեց

Պանրի արտադրությունը Ախալքալաքիում զարգացած ոլորտներից մեկն է: Տեղի պանրի արտադրողները պատրաստում են սուլգունի, որը անհապաղ է վաճառվում, լոռի, որի հնացման համար անհրաժեշտ է 2 ամիս, նաև Վրացական գործարանային պանիր է: Նրա հնացման ժամկետը 4 ամիս է: Օրիանական ձեռով գրանցված պանիր արտադրողները, ովքեր HACCP չափանիշ ունեն, վճարում են հարկեր եւ նրանց հսկողությունը իրագործում է սննդի ազգային գործակալությունը: Սակայն այս պահի դրությամբ, պանրի արտադրությունը տան պայմաններում արգելված չէ: Նման տիպի ձեռնարկությունները հսկողությունից դուրս են մնում եւ հաճախ պանիրը պատրաստելիս կաթի փոշի են օգտագործում: Հետևաբար, պանիրը էժան են վաճառում, ինչը շուկայում ստեղծում է անառողջ մրցակցություն:




Նախագծի արդյունքում զբաղվեց 4 տեղացի
Նախագծի ընդհանուր բյուջեն՝ 119,036.70 լարի
Եվրամիության ֆինանսավորումը՝ 68,603.00 լարի
Համաֆինանսավորումը՝ 50,433.70 լարի



Կարեն Սիմոնյանը Ախալքալաքիում գտնվող պանրի ձեռնարկության տնօրենն է եւ նրա գլխավոր նպատակն է արտադրել որակյալ պանիր: Ձեռնարկությունը կաթը հավաքում է Օկամի եւ Օլավերդի փոքր եւ միջին ֆերմերներից: Բարձր կաթնատվության սեզոնին օրական հավաքված կաթի քանակը հասնում է մինչեւ 10 տոննայի: Ձեռնարկությունը HACCP-ը տիրապետելուց բացի, ունի նաև հում կաթով արտադրությունը խորհրդանշող բնօրինակ վրացական որականիշի՝ «Վրացական կաթ» արտադրությանը փակցնելու իրավունք: Բարձր որակի ապրանք արտադրելու համար շատ եռանդ է ֆինանսներ է հարկավոր: Ֆինանսական աջակցության համար նա բանկերին էր դմում: Իսկ Եվրամիության կողմից Ախալքալաքիում հայտարարած դրամշնորհային մրցույթը հաղթելը ձեռնարկատերի համար փրկարար օղակ դարձավ: Ձեռնարկությունը, որի պանիրը աչքի է ընկնում առանձնահատուկ համով, ընդլայնվեց եւ ստեղծեց 5 աշխատատեղ:





Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպատակով, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.

